

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՆԵՐԸ



Լ. ԲԱՐԱՅԵԱՆԻ

արականատանը, որ ներկայումս կազմում է քաղաքական աշխարհի ուշադրութիւնը գրաւող երկրներից մէկը, ազգագրական տեսակէտից էլ ոչ պակաս հետաքրքիր է. նրա մօտ $9\frac{1}{2}$ միլիոն ազգաբնակչութիւնը բաղկացած է մահմեդական պարսիկներից, քրդերից, թուրքերից, հայերից, ասորիներից, աւղաններից, արաբներից, բելուջներից, եւրոպացիներից և կրակապաշտ ֆարսերից:

Ֆարսերը, որոնք համարւում են իսկական պարսիկները, մինչև այսօր ազգագրական ոչ այնքան զգալի փոփոխութիւններով կարողացել են պահպանել իրանց նախնիքների կրօնը և ազգագրական սովորութիւններից շատերը: Այնպէս որ էտնոգրաֆիական տեսակէտից դրանց ուսումնասիրելը գիտական մեծ արժէք և նշանակութիւն ունի, որովհետև դրանք են իսկական պարսիկները և ոչ թէ Պարսկաստանի ներկայ մահմեդական պարսիկները: Հայերին համար առանձնապէս հետաքրքիր է Պարսկաստանի կրակապաշտների ազգագրութիւնը, որովհետև մեր պատմութեան ներթափանցող շրջանում հայերը քաղաքական, տնտեսական և մտաւոր սերտ յարաբերութիւն են ունեցել Պարսկաստանի կրակապաշտների հետ իբրև հարևան երկու ժողովուրդներ, որոնք իրար վրայ փոխադարձաբար ազդել են: Հետևապէս և կրակապաշտների մասնաւոր ուսումնասիրութիւնը կարող է լոյս սփռել հայկական շատ սովորութիւնների վրայ, որոնք մինչև այսօր պահպանուել են հայ ժողովրդի զանազան մասերում:

Կրակապաշտների մասին եղած ուսումնասիրութիւնները շատ

քիչ են: Եւրոպական ազգերից միայն անգլիացիներն են եղել, որոնք ամենից շատ ուշադրութիւն են դարձրել կրակապաշտների ազգագրական սովորութիւնների ուսումնասիրութեան վրայ: Գիտական քիչ շատ արժէք ունեցող գրութիւնները նրանց մասին պատկանում է անգլիացի մի քանի ճանապարհորդների և ազգագրագէտների գրչին: Եւ այդ երևոյթը շատ բնական է, եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ կրակապաշտների ամենամեծ մասը ապրում է ոչ թէ Պարսկաստանում, այլ Հնդկաստանում, որ գտնւում է անգլիական իշխանութեան տակ: Գերմանացի ազգագրագէտներից միայն Հուլիոս-Շմիդտըն է կրակապաշտների մասին մի ամփոփ ուսումնասիրութիւն տուել, որ հրատարակուած է զգրմանական-արևելագիտական ընկերութեան՝ հանդիսում հետեւալ վերնագրով. «Ֆարսերը Պարսկաստանում, նրանց լեզուն և մի քանի սովորութիւնները», որը մինք էլ աչքի առաջ ենք ունեցել:

Եօթներորդ քրիստոնէական դարու սկզբում, երբ Մահմեդը հիմք էր դրել արաբացիների կրօնական և քաղաքական միութեան՝ ամբողջ Արաբիա թերակղզին ներկայացնում էր քաղաքական մի այնպիսի ոյժ, որ մեծ վտանգ էր սպառնում գրեթէ ամբողջ առաջաւոր Ասիային: Վերջինիս խոշոր մասերից մէկն էր Պարսկաստանը, որին վիճակուած էր ամենից շուտ ենթարկուելու արաբական համաշխարհային տիրապետութեան: Մահմեդից յետոյ արաբական երկրորդ խալիֆա Օմարի օրով, որ ամենայն իրաւամբ համարւում է արաբական համաշխարհային տիրապետութեան հիմնադիրը, իսլամը կարողացաւ տիրապետել Պարսկաստանը, Բիւզանդիայի կայսրութեան մի քանի գլխաւոր մասերը, Ասորիքը և Եգիպտոսը: Բիւզանդիան և Պարսկաստանն էին կազմում այն պետութիւնները, որոնք իբրեւ Առաջաւոր-Ասիայի երկու խոշոր ներկայացուցիչներ կարող էին դիմադրել արաբացիների քաղաքական առաջխաղացութեան, սակայն դրանք արդէն փոքրել էին իրանց գոյութեան հիմքերը, երկարատեւ և կործանիչ կռիւներ մղելով իրար դէմ: Եթէ պատմական այդ երևոյթի վրայ աւելացնենք նաեւ այն հանգամանքը, որ արաբական մեծ անապատին մօտ՝ Առաջաւոր-Ասիայում բնակւում էին բաւականաչափ արաբ զաղթականներ, այն ժամանակ մեզ համար հասկանալի կլինի արաբացիների արագ և աշող նուաճումները:

Ամենից առաջ արաբացիները զգալի աշողութիւն ունեցան Պարսկաստանում, որտեղ իշխում էր Սասանեան հարստութիւնը: Խոսքով Թազաւորի յաջորդ Կաւադ Բ. ստիպուած էր հաշտութիւն կնքել Բիւզանդիայի Հերակլ կայսրի հետ, երբ գիտակցեց արա-

րացիներից Պարսկաստանին սպառնացող քաղաքական վտանգը: Նա թագաւորեց միայն մի քանի տմիս (628), որի յաջորդներից նշանաւոր էր Յազկերտ Գ.—Սասանեան հարստութեան վերջին թագաւորը (632—651): Հէնց այս թագաւորի կառավարութեան առաջին տարիներում զրադաշտական պարսիկները առաջին անգամ ընդհարուեցին մահմեդական արաբների հետ և ստիպուած եղան իրանց երկիրը յանձնել արաբական տիրապետութեան և րացի զրանից ընդունել Մահմեդի կրօնական վարդապետութիւնը: «Արեւմտեան Ասիայի պատմութեան մէջ ամենամեծ դժբաղդութիւնը այն հանգամանքն էր, որ Պարսկաստանը չմիացաւ արեւմտեան հուլտուրական աշխարհի հետ, իբրև մի կենդանի անդամ, այլ յամառութեամբ պահպանեց իր ինքնուրոյնութիւնը, որպէս զի դա ոյժի ճշման տակ վերջապէս փոխարինէ մի աւելի քիչ արժէք ունեցող կրօնի և հուլտուրայի հետ», նկատում է շատ ճիշտ գերմանացի նշանաւոր պատմաբան դօկտ. Հայնրիխ Ծուրցը:

641 թուականից առաջ արաբացիներն արդէն նուաճել էին Պարսկաստանի գլխաւոր նահանգներից մի քանիսը և զրադուած էին մնացած նահանգների դիմադրական փորձերը թուլացնելով, որ արաբներից զեռ մի քանի տարի խլեց: Յազկերտ Գ. իր փոքրութիւնը զօրքով կենդրոնացել էր Պարսկաստանի Քորասան նահանգում, որտեղ յոյս ունէր վարձկան զինուորներ գտնելու արաբներին դիմադրելու համար: Սակայն հէնց այդ նահանգում գտաւ Սասանեան հարստութեան վերջին միապետը իր մահը: Մի քանի մարդասպաններ զաղտնի դաւադրութիւն էին կազմել նրա կեանքի դէմ, որին և զոհ դնաց Յազկերտ Գ.—ը, Պարսկաստանի պատմութեամբ մէջ «վատրադդ» (դժբաղդ) մականունը ժառանգելով: Սասանեան դինաստիայի այս ամենավերջին դժբաղդ ներկայացուցչի մահից յետոյ Պարսկաստանը հրատարակուեց իբրև արաբական միապետութեան հպատակ երկիր:

Սակայն զրանով չբաւականացան արաբացիները նուաճուած Պարսկաստանի նկատմամբ: Նրանք իրանց իշխանութիւնն աւելի ևս ամրապնդելու համար Պարսկաստանում, սկսեցին բռնի կերպով Մահմեդի վարդապետութիւնը տարածել նրա ընակիչների մէջ: Կրակապաշտ պարսիկները արաբների կարծիքով անհաւատներ էին, որտեղ պէտք էր ոչնչացնել Զրադաշտի կրօնական սուտ ուսմունքը և ընդունել տալ Մահմեդի վարդապետութիւնը: Այդ էր եղել Պարսկաստանի ներսը կազմակերպուած արաբական արշաւանքի նպատակը, ինչպէս որ առաջուց յայտարարել էր արաբական խալիֆան:

Սարսափելի էր կրօնական այն սաստիկ հալածանքը, որ ա-

րաբացիները սկսեցին կրապաշտ պարսիկների դէմ: Ամենասուկալի պատիժների էին ենթարկւում այն պարսիկները, որոնք որ և է դիմադրութիւն էին ցոյց տալիս Իսլամի դէմ: Կարճ ժամանակի ընթացքում Պարսկաստանի բնակիչները ստիպուած եղան թողնել կրակի պաշտամունքը և մի կերպ հաշտուել մահմեդական նոր կրօնի հետ:

Իսկ այն պարսիկները, որոնք ոչ մի պայմանով չէին ցանկանում հրաժարուել իրանց նախնիքների պաշտած յաւիտենական կրակից, ստիպուած եղան թողնել իրանց նահանգները և արաբացիներից, որքան կարելի է հեռու փախչել, որպէս զի ազատեն նրանց կրօնական հալածանքներից: Եւ հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ արաբացիները չկարողացան միանգամից Պարսկաստանի բոլոր մասերում տարածել իրանց առաջին մեծ Պալիֆայի քարոզած կրօնը: Դրա համար հարկաւոր էր ժամանակ, որպէս զի արաբացիները կարողանային իրանց նուաճած երկրի բոլոր մասերում արմատացնել մահմեդականութիւնը:

Նոր կրօնի ամենաոտնորդ թշնամիները հանդիսացան Պարսկաստանի նշանաւոր նահանգներից մէկի՝ Յարսիստանի բնիկները, որոնց մէջ Զրադաշտի կրօնական վարդապետութիւնը ամենից խոր արմատ էր ձգել: Դրա համար էլ ամենից շատ տուժեցին այդ նահանգի պարսիկները, որոնք անասելի տանջանքների ենթարկուեցին մոլեռանդ արաբացիների կողմից: Վերջիններս այդտեղ էին կենդրոնացրել թէ իրանց քաջ զինւորները և թէ պրոպագանդիստ քարոզիչների մի զգալի մասը: Այդտեղ վաղ ժամանակներից ի վեր գոյութիւն ունէին բազմաթիւ կրակատներ, որոնք Պարսկաստանի միւս մասերից շարունակ ուխտաւորներ էին գրաւում: Յարսիստանը Իսլամից առաջ կրակապաշտ պարսիկների կրօնական գլխաւոր կենդրոններից մէկն էր կաղմում, որտեղ կրակի պաշտամունքը աւելի հանդիսաւոր ձևերով էր տեղի ունենում: Այդպիսի մի կենդրոնում Մահմեդի նոր կրօնը չէր կարող սովորական յաղթանակը տանել: Այդ էր գլխաւոր պատճառը, որ Յարսիստանում զեռ Աբբասեան հարստութեան ժամանակ գոյութիւն ունէին կրակի բազմաթիւ տաճարներ, որոնց երկրպագուները մինչև այսօր էլ թողել են իրանց հաւատարիմ ժառանգները Պարսկաստանի զանազան մասերում:

Զափազանցութիւն չի լինիլ, եթէ ասենք, որ Պարսկաստանի ազգաբնակչութեան բազմազան տարրերից և ոչ մէկը իր կրօնի համար երկար ժամանակի ընթացքում այնպէս սոսկալի կերպով չէ տանջուել, ինչպէս զրադաշտական պարսիկները: Այդ տանջանքները ունեն մօտ 1200 տարուայ պատմութիւն: Արաբական տի-

րապետութիւնից մինչև 19-րդ դարու առաջին քառորդը կրակապաշտ ֆարսերի պատմութիւնը արինով է ներկուած: Այդքան ժամանակի ընթացքում ֆարսերը իրանք կենդրոնական իշխանութեան կողմից անխնայ կերպով հալածուել և միշտ տուժել են կրակի պաշտամունքի համար: Նրանք ազատ շունչ են քաշել Պարսկաստանի միայն վերջին երեք միապետների օրով, որոնց շնորհիւ կրօնական ազատութիւն է հրատարակուել նաև կրակապաշտների համար: Կրօնական այդ շտեմնուած հալածանքն է եղել գլխաւոր պատճառը, որ դրապաշտական ֆարսերի մեծ մասը զաղթել է Հնդկաստանի զանազան քաղաքները և նրանց միայն փոքրաթիւ մասն է մնացել Պարսկաստանում, որի ապագան յուսատու չէ:

Պարսկաստանի ներկայ կրակապաշտները մի քանի անուններով են յայտնի: Նրանք կոչւում են Փարսեր, Զարդուշտիներ, (Զրադաշտականներ) Գրոսկապաշտներ և Գեարեր: Վերջին անունը ծագել է «գեաւուր» խօսքից, որ անհաւատ է նշանակում: Այդպէս են կոչում նրանց թէ՛ մահմեդական պարսիկները և թէ՛ Պարսկաստանում ապրող միւս ազգերը: Հէնց այդ է պատճառը, որ կրակապաշտները սաստիկ վիրաւորւում են, երբ գեարք խօսքն էի գործածում նրանց վերաբերմամբ:

Ինչպէս Պարսկաստանի միւս ազգերի, այնպէս էլ գեարքերի միշտ թիւը մինչև այսօր էլ յայտնի չէ, որովհետև այնտեղ միշտ բացակայիլ է ազգաբնակչութեան վիճակագրութիւնը եւրոպական մոդով: Սակայն մեր հաւաքած վիճակագրական մօտաւոր տեղեկութիւնների հիման վրայ, Պարսկաստանում ներկայումս ապրում են մօտ 10,000 գեարքեր, իսկ նրանց մեծ մասը (105,000) զաղթել է Հնդկաստանի նշանաւոր կենդրոնները, գլխաւորապէս Բօմբէյ (որտեղ առևտրով և բանկիրութեամբ են զբաղւում) և Անգլիա (250):

Գերմանացի գիտնական դօէտ. Հութում-Շիդդէրը 1882 թւին հրատարակած իր վերոյիշեալ յօդուածում տուել է գեարքերի այն մօտաւոր վիճակագրութիւնը, որ եղել է 1879 թւին: Ըստ այդ վիճակագրութեան այն ժամանակի գեարքերի. ընդհանուր թիւը հասել է 8499-ի:

Սակայն մեր հաւաքած վիճակագրական տեղեկութիւնների համեմատ գեարքերի թիւը 1879 թւից սկսած մինչև այսօր հետզհետէ բազմացել և հասել է մօտաւորապէս 10,000-ի: Գեարքերի թիւը այդքան ժամանակուայ ընթացքում աւելի կրազմանար, եթէ նրանց մի զգալի մասը առևտրական գործերով Հնդկաստան քաղթած չլինէր: Դրան իբրև ապացոյց ծառայում է մի ուրիշ վի-

նականութիւն, որ եղել է 1854 թուին: Կրակապաշտ մի նշանաւոր գիտնականի (Ֆրեմլի) ասելով, այդ թուականին ամբողջ Պարսկաստանում եղել է 7200 գեարբ, որոնցից 6658 հոգի բնակւում էին Նազդ քաղաքում (3310 տղամարդիկ և 3348 կանայք), 450 Քերմանում, 50 Թեհրանում և մի քանի հոգի էլ Շիրազում: Հետևապէս գեարբերի ընդհանուր թիւը 25 տարուայ ընթացքում (1854—1879) ասելացել է 1299 հոգով: Եթէ ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ նրանցից շատերը $1\frac{1}{2}$ տարուայ ընթացքում դադթել են Հնդկաստան և ուրիշ երկրներ, այն ժամանակ պարզ կլինի, թէ որքան զգալի կերպով բազմանում է նրանց ընդհանուր թիւը:

Պարսկաստանի գեարբերը գլխաւորապէս բնակւում են Նազդ, Քերման, Թէհրան, Քաշան, Շիրազ և Բուշէր քաղաքներում ու նրանց շրջակայ գիւղերում: Ըստ քաղաքների նրանց թիւը հետեւեալն է.

Նազդ իր շրջակայքով	.	.	.	.	6600
Քերման	«	«	.	.	2600
Թէհրան	«	.	.	.	500
Շիրազ	«	«	.	.	60
Քաշան	«	«	.	.	50
Բուշէր	«	«	.	.	40

Իսկ մնացած 160 հոգին ցրուած են Պարսկաստանի դանազան քաղաքներում, որտեղ նրանք ժամանակաւորապէս են միայն ապրում: Առհասարակ Պարսկաստանի գեարբերի մէջ տիրում է ընդհանուր ձգտումն ապրելու իրանց գլխաւոր կենդրոններում (Նազդ, Քերման և Թէհրան) կամ նրանցից ոչ հեռու:

Դեարբերը ընդհանրապէս բարձրահասակ և նիհար մարդիկ են: Նրանք սևահեր, սևաչեայ և գունատ են: Կարմրահեր և գեր գեարբերի թիւը շատ քիչ է: Նրանց կաշուի գոյնը մի քիչ դեղնաւուն է և կարմիր թուշ ունեն միայն կանայք: Իրանց դէմքի գծագրութեամբ գեարբերը ասելի չուտ նման են հայերին, քան մահմեդական պարսիկներին: Կրակապաշտները հայերից տարբերւում են միայն իրանց տարազով, որ բաւական նման է պարսկականին:

Տղամարդ գեարբերը հագնում են զանազան կտորներից երկար վերնագգեստ, արխալուղ, որ նրանց լեզւով կոչւում է պնա-րաթ, իսկ տակից հագնում են եօթն (սրբազան թիւ) տարբեր կտորներից ներսի շապիկ (սնդրէն) և գլուխները ծածկում են դաստարով (չալմա): Քաղաքներում միայն գեարբերը դնում են պարսկական գլխարկներ, որ կոչւում է կօլա: Նրանք իրանց մարմնի վրայ կախում են նաև ազօթքի թալիսմանը, որ կոչւում է քուշտի:

Գեարքերի գուլպաները, վարտիկները և կօշիկները նման են պարսկականին:

Սակայն շատ հետաքրքրական է գեարը կնոջ տարազը: Այն ինչ պարսկահայատակ բոլոր ազգերի կանանց մեծամասնութիւնը չազդաներով կամ չարսաւներով ծածկուած է զուրս գալիս փողոց, գեարը կինը այդ տեսակէտից բացառութիւն է կազմում գրեթէ ամբողջ Պարսկաստանում: Նրան բոլորովին անծանօթ է չարսաւի գործածութիւնը: Գեարը կինը ամեն տեղ զուրս է գալիս բաց հրետով և առանց սաւանի: Մահմեդական հարեմական կեանքը ամենից քիչ ազդել է նրա վրայ: Նա առանց խուսափելու խօսում է թէ ևւրոպացիների, թէ հայերի և թէ ուրիշ ազգերի պատկառնող անհատների հետ: Միայն մի քիչ քաշոււմ է պարսիկներից:

Գեարը կնոջ հագուստը բաղկացած է հետևեալ մասերից: Կանայք իրանց գլուխները ծածկում են հինգ տարբեր աղուխներով, հագնում են զանազան գոյների կտորներից կարած երկար շապիկներ, նրանց վրայով արխալուղ, որը նոյնպէս կոչւում է պնարա, յետոյ ուռած վարտիկ, որ շելվար է կոչւում: Կանանց զարդարանքները հետևեալներն են. մատանի (ունգուշտէր), ապարանջան (միլզաշտ), օղեր և այլն:

Գեարքերի ընտանեկան կեանքը բաւական նախանձելի է: Այնտեղ գոյութիւն չունի հարեմական կեանքը իր մի շարք բացասական երևոյթնեցով: Գեարը կինը ոչ թէ հարեմի կամ խոհանոցի զարդ է, այլ իր ամուսնու հաւասար ընկերը: Գեարքերի մէջ ամուսնութեան ձևերից տիրապետողը միակնութիւնն է: Բազմակնութիւնը շատ քիչ է տարածուած նրանց մէջ: Գեարքը երկրորդ կին է պահում այն դէպքում, երբ իր առաջին կինը ամուլ է: Այդ դէպքում երկրորդ կին առնելը թոյլ է տալիս նրանց օրէնքը: Այն գեարքերը, որոնք զազանի կերպով ուրիշ կանայք էլ են պահում, ենթարկոււմ են հասարակութեան կատարեալ արհամարհանքին: Շատ մեծ է այն երիտասարդ կանանց թիւը, որոնք իրանց առաջին ամուսնու մեռնելուց յետոյ երկրորդ անգամ չեն ամուսնանում, որովհետև երգուել են հաւատարիմ մնալու:

Շատ հետաքրքրական է ամուսնութեան սովորութիւնը գեարքերի մէջ: Ամուսնանալու ժամանակ ամուսինները երգում են միմեանց հաւատարիմ մնալու թէ ներկայ և թէ ապագայ կեանքում: Հօրեղբոր որդին կարող է ամուսնանալ իր հօրեղբոր աղջկայ հետ: Նոյնպէս և մօրաքրոջ աղջիկը մօրաքրոջ որդու հետ: Իւրաքանչիւր գեարք ծնողներ ամենից առաջ աշխատում են իրանց զաւակներին ամուսնացնել իրաւունք ունեցող ազգականների հետ:

Ամուսնութեան հանդէսը կատարում է նրանց մոթէթը (մոգը),

որը գտնուում է ամենաբարձր հոգևորականի (ղաստուր—է զաստուրան) իշխանութեան ներքոյ: Աւագ քահանան կոչուում է զամորէթ: Ամուսնացող զոյգերի համար դահմորէթը պարտաւոր է գրաւոր թոյլտուութիւն խնդրել ամենաբարձր հոգևորականից: Այդ թոյլտուութիւնը ստանալուց յետոյ դահմորէթը զնում է ամուսնացող զոյգերի մօտ և ամենքի ներկայութեամբ գրաւոր հրամանը յանձնում մորէթին (մոգին): Վերջինս այդ հրամանը ստանալուց յետոյ միայն կարող է կատարել հարսանիքի հանդէսը:

Աղջիկները սովորաբար ամուսնանում են 12 տարեկանից սկսած, իսկ տղաները 18: Գեարքերի կարծիքով եթէ մի աղջկայ ուսերին պինդ խփում ես և նա վայր չէ ընկնում, նշանակում է նրա ամուսնանալու ժամանակը արդէն հասել է: Հարսանիքի հանդէսը միևնոյն օրը սկսւում է թէ աղջկայ և թէ տղայի տներում: Աւագ քահանան ամենից առաջ զնում է տղայի մօտ և նրանց հիւրերի միջից ընտրում եօթն ձերեր կամ աղսախկաներ, որոնք մի մի վաւած մոտ բռնած զնում են հարսի տունը: Հարսի հայրը մեծ պատուով ընդունում է աւագ քահանային և 7 աղսախկաններին: Աւագ քահանան յայտնում է հարսնացուի հօրը, որ ինքը իր վկաներով եկել է աղջկայ կամքը և իրաւունքը խնդրելու: Հայրը իրաւունք է տալիս դրանց ներկայանալու աղջկան: Վերջինս այդ ժամանակ ծածկուած է լինում մի կանաչ քողով (շալսարդ) և շրջապատուած իր ամենամօտիկ ազգականներով: Աւագ քահանան երգելով 7 անգամ հարցնում է աղջկան հետեւեալը. «Հըմօյիւնէ Քէյ-Պոսրով շմօ բէաղդօ նեքօնէ Հուշանդէ Քէյլումարդ ոօզիհիդ» Հէմօյիւնէ Քէյ-Պոսրով (աղջկայ անունը և ազգանունը) դուք համաձայն եք ամուսնանալու Հուշանդէ Քէյլումարդի (տղայի անունը և ազգանունը) հետ: Աղջիկը երգելով և երկարացնելով պատասխանում է բանի (այո):

Աղջկայ համաձայնութիւնը լսելուց յետոյ բոլոր ներկայ եղողները ուրբա են կանչում: Ուրբա են կանչում նաև աւագ քահանայի՝ աղջկան ուղղած հարցի ժամանակ: Դրանից յետոյ մոգպետը աղջկայ անունը յիշելով, հարցնում է հետեւեալը. «Ռեզօհի քէ դէհ իսա ոսսա, սոլորի բիդէ փետարէ ոսսա, վեաքիլը շմօ քեհնէ», («այս գործի համաձայնութիւնը, որ ձեզ է վերաբերում և իրաւունքը, որ ձեր հօրն է պատկանում, ձվ է ձեր կողմից վկան»):

Աղջիկը սովորաբար իր հօր վրայ է մատնացոյց անում, եթէ նա կենդանի և ներկայ է, հակառակ դէպքում իր ամենամերձաւորին: Բոլոր ներկայ եղողները բարձրաձայն աղաղակներով շնորհաւորում են և աւագ քահանան հարսնացուի և փեսացուի

վկաների հետ միասին վերադառնում է փեսայի տունը, որտեղ նրան սպասում է և մոզը:

Փեսացուի տանը նախօրօք պատրաստում են հարսի հագուստները և հարսանիքից մի քանի օր առաջ ուղարկում աղջկայ տունը: Փեսացուի հագուստներն էլ պատրաստում են հարսնացուի տանը: Հարսնացուն հագուստները ուղարկելու ժամանակ իր ապագայ ամուսնուն ուղարկում է նաև գեարբերի զլխաւոր կրօնադիրք Զննդ-Աւետան, որի մէջ ամփոփուած է Զրադաշտի վարդապետութեան բովանդակութիւնը: Հագուստները ստանալուց յետոյ փեսացուն հաղնում է դրանք, միայն բոլորովին արձակ և առանց կոճկելու: Նրա հագուստների վրայ ոչ մի կապ չէ լինում: Այդպէս է վարւում փեսացուն, որպէս զի իր գործը ապագայում աշոյ լինի և կեանքի ոչ մի ասպարիզում չկապուի:

Բոլոր ներկայ եղողները մտնում են հիւրասենեակը: Առաջ մոզը ամենքին առաջարկում է աղօթել: Փեսացուն կանգնում է հարսնացուի տնից եկած վկայի կողքին և նրա հետ միասին աղօթում: Աղօթքից յետոյ ամենքը նստում են: Փոքր բարձիւր են ներս բերում: Հարսնացուի վկան նստում է այդ բարձիւրի վրայ, փեսացուն նրա հանդէպ, իսկ քահանան տեղաւորւում է նրանց մէջ: Այդ բարձիւրը փեսացուն է առաջարկում իբրեւպատիւ հարսնացուի վկային: Քահանան այդ երկուսի մէջ է տեղ բռնում նրա համար, որպէս զի երկուսի դէմքերն էլ կարողանայ գիտել: Այդ ժամանակ աւագ քահանան իր մօտ պահած ամուսնութեան հրամանը յանձնում է քահանային: Քահանան կամացուկ կարդում է դա և համբուրելով իր ճակատին դնում:

Դրանից յետոյ մոզը հարցնում է փեսայից, թէ նա արդեօք մի ուրիշին երբ և իցէ ամուսնութեան առաջարկ չէ արել: Փեսան բացասական պատասխան է տալիս: Մոզը հասկացնում է փեսային, որ ապագայում մեղքի ամբողջ ծանրութիւնը կընկնի փեսայի վրայ, եթէ նա երբ և իցէ մի ուրիշ աղջկայ առաջարկել է ամուսնանալու: Միևնոյն հարցը մոզը տալիս է նաև հարսի վկային:

Հարսանիքի հանդիսի համար առաջուց պատրաստում են մի աման քաղցրեղէն և 7 տեսակ չոր մրգեղէն: (7 և 33 թուերը գեարբերի համար սրբազան նշանակութիւն ունին): Առաջ քահանան այդ մրգերից մի քիչ վերցնում, դնում է փեսայի այն ձեռքում, որ բռնել է հարսի վկան: Փեսայի կողմից մի երիտասարդ մօտենում է այդ երկուսին և իր երկու ձեռքերը դնում փեսայի զլխին: Առաջ քահանան բռնում է այդ երիտասարդի ձեռքերը և նրանց մէջ դնում 7 տեսակ չոր մրգերից: Միրգը ծածկում է կա-

նաշագոյն մետաքսի մի կտորով, իսկ վերջինիս վրայ դնում մի մկրատ, մի նուռ և մի ձու:

Դրանից յետոյ է կատարւում ամուսնութեան իսկական ծէսը զանազան աղօթքներով: Աւագ քահանան փեսային մի շարք խրատներ և խորհուրդներ է տալիս՝ ամուսնական կեանքում հաւատարիմ լինել, լաւ ըմբռնել փոխադարձ օգնութեան մեծ նշանակութիւնը, մերձաւորներին օգնելու յարգել, ծերերին պատուել և այլն: Քահանան մանաւանդ շեշտում է այն հանգամանքի վրայ, որ փեսան իր կեանքում շրջապատող մարդկանց վերաբերմամբ պէտք է հաշտարարի, խնամակալի և խորհրդատուի դեր կատարի: Վերոյիշեալ խրատներ տալը տևում է ²¹/₄ ժամ:

Գեարքերի կարծիքով իւրաքանչիւր անհատ իր կեանքում պէտք է ունենայ մի բարի խնամակալ և խորհրդատու, առանց որի նա կեանքում ոչինչ չպէտք է գործի, որովհետև նրանք աւսում են. Վենիսի խորհուրդ գործը չի կատարուել կամ չի իրականանալ և այն գործը, որ մարդկանց դուր չէ զայիս, աստժուռ էլ հաճելի չէ: Վերոյիշեալ խրատները լսելուց յետոյ փեսան ընտրում է իր կեանքի խնամակալը—դոնո (գիտուն): Դրանից յետոյ քահանան խրատում է նաև հարսին և փեսային առաջարկում է ընտրել իր ազիզ օրը ամսուայ մէջ:

Գեարքերը իւրաքանչիւր ամսի 5 օրը (9, 13, 16, 20, 26) ազիզ կամ նուիրական են համարում: Այդ օրերից մէկը իւրաքանչիւր գեարք պէտք է իր համար իրեն ազիզ օր ընտրի և բացի դրանից որոշի իր տնային մոգին: Ահա սրանով էլ վերջանում է գեարքերի հարսանիքի հանդէսը, որի վերջին մասը դուռ քէֆից է բաղկացած լինում:

Որովհետև գեարքերի համար իւրաքանչիւր ամսի 5 օրը ազիզ է համարւում, դրա համար էլ մի քանի խօսք կարենք նաև նրանց օրացոյցի մասին, որ բաւական տարբերւում է պարսկականից: Գեարքական օրացոյցի այդ տեղեկութիւնները մենք քաղում ենք դօկտ. Հութում-Շինդլէրի վերև յիշած ուսումնասիրութիւնից:

Գեարքերի տարին ունի 360 օր, որ բաժանւում է 12 ամիսների վրայ (իւրաքանչիւր ամիս ունի 30 օր): Ամսի իւրաքանչիւր օր ունի իր առանձին անունը: 12 ամիսները հետևեալներն են.

- | | |
|------------------------|-------------------------|
| 1. Փերվեդին | 7. Միհր |
| 2. Արդիբեհշտ | 8. Աբան (Աբուն) |
| 3. Յուրդադ | 9. Ազհէր (Ադուր) |
| 4. Տիւր կամ Տեշտէր | 10. Դէ |
| 5. Ամուրդադ | 11. Բահման |
| 6. Շեհրիվէր (Շեհրիուր) | 12. Իսֆէնդար (Սեֆէնդար) |

Ամսի 30 օրերը հետեւեալ անունները ունեն.

1. Հօրմուզդ	11. Պուրշիդ	21. Ռամ
2. Բանման	12. Մահ	22. Բադ
3. Արդիրենհշտ	12. Տիւր	23. Դէրէդին
4. Շենրիուր	14. Գուշ	24. Դին
5. Սեֆէրդարմուզդ	15. Դէրէմինր	25. Էրդ
6. Պուրդադ	16. Մինր	26. Աշտատ
7. Ամրդադ	17. Սարվիշ	27. Ամման
8. Դէրադէր	18. Ռէշն	28. Ջիադ
9. Ադհէր	19. Ֆերվէրդին	29. Մարեսֆէնդ
10. Արան	20. Բահրամ	30. Անարան

Գեարրերը իրանց տարիթիւը հաշոււմ են 632 թւից, երբ Սասանեան հարստութեան վերջին թագաւոր Յազկերտ Գ-ը զահր բարձրացաւ. սակայն շատ պատմաբանների կարծիքով Յազկերտ Գ. ոչ թէ այդ թուականին է զահր բարձրացել, այլ 634-ին:

Բւրաքանշիւր ամիս բաժանոււմ է 4 միմեանց անհաւասար շաբաթների կամ շրջանների, որոնց առաջին օրերը (1. 8. 15. 23) գեարրերի համար տօն օրեր են:

Բւրաքանշիւր ամսի 3 կամ 4 օրը հողերականների համար աղօթքի օրեր են: Տօն օրեր են հաշոււմ նաև ամսի այն օրերը, որոնց անունները ամիսների անուններին նման են. բացի դրանից տօն օրեր են զարնանամուտի առաջին օրը, Քէյ Պոսրովի ծննդեան օրը, խուրդադի 6-ը (այդ օրը որոշուած էր սպանել Պարսկաստանի բոլոր գեարրերին, բայց բարեբաղդաբար նրանք ազատուեցին Շահ-Աբրաս Բ.-ի շնորհիւ), Տիրմահի 13-ը (այդ օրը սկսեց Ֆէրիդունը տէրութիւնը բաժանել իր որդիներին), Տիրմահի 22-ը (երբ Ֆէրիդունը վերջացրեց տէրութեան բաժանումը), կրակի տօնը, երբ բոլոր տներում մեծ կրակներ են վառոււմ, աղօթոււմ և ազգականներին հիւրասիրոււմ և այլն:

Բոլոր գեարրերը Քէյ-Պոսրովի մահուան օրը սուգ են պահոււմ: Ֆէրվիդդինի 1—6-ը տօն է. ամեն օր ծոմ են պահոււմ կէսօրից մինչև արևի մայր մտնելը և ամբողջ ժամանակը աղօթոււմ են ¹⁾:

Մեծ ծէսերի և սովորութիւնների հետ է կապուած գեարրերի մէջ ոչ միայն հարսանիքի հանդէսը, այլ և ծնունդը: Գեարրը իր կեանքում ամենից շատ ուրախանում և զանազան տեսակ հիւրասիրութիւններ է սարքում նաև ծննդեան հանդէսի ժամանակ:

¹⁾ Houtoum-Schindler: Die Parsen in Persien, ihre Sprache etc. 61.

Գեարքերի մէջ ծննդաբերութեան հետ կապուած են հետեւեալ սորոքութիւնները:

Ծննդաբերութեան ժամին գեարք կինը նստում է, մի քիչ յենուելով դէպի ետև: Նրա մօտ լինում են երեք ուրիշ կանայք, որոնցից մէկը բռնում է ծնող կնոջ ուսից, երկրորդը մէջքից, իսկ երրորդը շփում է նրա մարմինը: Ծնելուց առաջ սենեակում դնում են սոխ, հաց, աղ, դանակ, ատրճաճակ կամ հրացան, ասեղ, կրակ, խունկ, կնդրուկ, մի շիշ և զանազան տեսակ անուշահոտ փայտեր կամ բոյսեր: Մի քանի աղիւաններ են շարում, կրակ են դնում դրանց վրայ և այրում են անուշահոտ փայտերը կամ բոյսերը: Ծնելուց առաջ կինը կանգնում է այդ աղիւանների վրայ և կրկին նստում իր անկողնում: Երեք կանայք, որոնք իսկապէս մանկաբարձուհու դեր են կատարում, վեցնում են նորածին երեխային, լուանում են տաք ջրով, փաթաթում շորով, որից յետոյ ներս է մտնում մողը և աղօթում թէ մօր և թէ նորածին երեխայի համար: Ծննդեան առաջին օրը երեխային կերակրում են շաքարաջրով և թարմ իւղով, իսկ երրորդ օրուանից արդէն մօր կաթով: Սոխը, հացը, դանակը, ատրճաճակը կամ հրացանը և ասեղը դնում են կնոջ բարձի տակ և մանկաբարձուհի կանանց աչքերը օծում են անուշահոտ իւղերով իբրև ուրախութեան նշան: Յետոյ սենեակի շուրջը գիծ են քաշում և ասում հետեւեալ խօսքերը.

Գիծ եմ քաշում

Գիծ եմ քաշում,

Ծնող կնոջ

Գիծն եմ քաշում:

Եթէ սենեակը սպիտակացրուած է լինում, այն ժամանակ գիծը ածուխով են քաշում, որպէս զի նա պարզ երևայ: Գեարքերի կարծիքով վերոյիշեալ գիծը քաշում են նրա համար, որպէս զի օտար և վտանգաւոր մարդիկ չկարողանան ներս մտնել ծնող կնոջ սենեակը և նրան նեղացնել: Դանակը, ատրճաճակը կամ հրացանն էլ կնոջ պաշտպանութեան համար է լինում դրուած նրա բարձի տակ:

Մանկաբարձուհի երեք կանանցից մէկը 3 օր շարունակ մընում է ծնող կնոջ մօտ: Երեք օրից յետոյ մի պղնձէ զաւաթով կնոջ և նորածին երեխայի գլխին ջուր են ածում, իբրև մաքրելու նշան: Նոյնը կրկնում են վեցերորդ և քառասներորդ օրը:

Ծննդեան չորրորդ օրը ազգականները դնում են նորածին մանկան անունը որոշելու: Գեարքերի մեծ մասը երկու անուն ունի. Առաջին անունը նրանք ստանում են իրանց ծնուելու առա-

ջին օրը, իսկ երկրորդը շորրորդ օրը: Նորածին մանուկը ստանում է կամ իր ծնողների առաջուկայ որդած անունը, կամ հաւաքուած աղգականների ձայնից բազմութեամբ ընտրած անունը, կամ թէ չէ ամսի այն օրուայ անունը, երբ լոյս աշխարհ է եկել մանուկը:

Գեարքերի մէջ տղամարդկանց ամենատարածուած անունները հետեւեալներն են.

Բախտիար, Բահրամ, Ռուստամ, Իսֆանդիար, Արտիշիր, Ռաշիդ, Ջոհրար, Բահման, Խոզարաշխ, Անուրմազդիար, Նիւշիր՝ վան, Սիափուշ, Զեմշիդ, Մհրբրան, Քէյ-Խոսրով, Քերիմ, Մուրադ, Նօրուդ, Քեմէնդար, Զանդիր, Ռահման, Մանուշէր, Զալ, Ֆիրդուսի, Շահգադ, Իսկենդէր և այլն:

Կանացի տարածուած անունները հետեւեալներն են. Խուրշիդ (արեղակ), Գիւլիստան, Պեմա, Գիւլբերի (վարդակին), Գիւլանդամ, Գիւլթանդ (վարդագոյն), Գոհար, Քոքեր, Նարաթ, Մահրանու, Ալլի, Գիւլրու և այլն:

Գօկտ. Հութում Շինդլէրը գեարքերին նուիրուած իր ուսումնասիրութեան մէջ նկարագրում է մի քանի ուրիշ սովորութիւններ, որոնք կապուած են ծննդաբերութեան հետ: Նրա ասելով ծննդկան կինը իր անկողինը թողնում է վեցերորդ օրը և մինչև քառասուն օր լրանալը չէ ճաշում իր ընտանիքի անդամների հետ միասին: 40 օր անցնելուց յետոյ կինը մաքրւում է, որից յետոյ միայն իրաւունք է ստանում շփուելու ընտանիքի միւս անդամների հետ: Ծննդկան կնոջ հագուստները դնում են մի սարի վրայ և քարերով ծածկում դրանք: Շատ անգամ աղքատ մարդիկ վերցնում են այդ հագուստները, մաքրում և իրանց համար գործածում:

Բացի դրանից միեւնոյն գիտնականի ասելով ծննդկան կնոջ և նրա նորածնին 6 օր շարունակ մեծ վտանգ է սպառնում: Այդքան ժամանակի ընթացքում մէկը շարունակ պէտք է հսկի մօր և նորածնի վրայ, որպէս զի կանացի դէմք ունեցող Ալկոշւած կենդանին ներս չմտնի և չսպանի երկուսին կամ երեխային չփախցնի: Այդ հսկողութիւնը շատ խիստ է լինում մանականդ վեցերորդ օրը, երբ ընտանիքի բոլոր անդամները ծննդկանին շրջապատած հսկում են մինչև եօթներորդ օրուայ առաւօտը, որպէս զի Ջիշկոշւած Թուշներ չյափշտակի նորածնին: Գեարքերի կարծիքով այդ թոշունը սովորաբար երեւում է վեցերորդ գիշերը, սպանում է ծննդկանին և փախցնում նորածնին, եթէ վերջիններիս վրայ հսկողութիւն չկայ:

Այսքանն է պատմում զօկտ. Հութում-Շինդլէրը. սակայն

այդ սովորութիւններից մի քանիսը այժմ վերանում են գեարբերի մէջ, ինչպէս մեզ պատմեցին Քէհրանի՝ մի քանի կրակապաշտներ:

Եթէ ծննդկանը կամ նորածինը քառասուն օրուայ ընթացքում մեռնեն, այն ժամանակ նրանք դասւում են հասարակ մեռեալների շարքում: Երբ ծննդկանը առաջին օրերում ամեն տեսակ վտանգներից ազատւում է, այն ժամանակ նրա ընտանիքը հիւրասիրում է իր մօտիկ ազգականներին և բարեկամներին, որոնք երկու օր շարունակ ուրախ ժամեր են անցկացնում միասին:

Գեարբերի ամենահետաքրքիր սովորութիւնները և ծէսերը կապւած են մեռեալների թաղման հանգիսի հետ: Մեռած գեարբերին թաղում են իրանց գերեզմանատներում, որոնք ընդանուր խօսքերով շուտօրէն ամբողջւում են կոչւում: Գեարբերի ամենանշանաւոր շուտօրէն ամբողջը-ներից մէկը գտնւում է Քէհրանի մօտ՝ մի բարձր սարի գլխին, որ յայտնի է Բիբի Շարաբանի անունով: Դա գեարբական այն գերեզմանատունն է, որի նկարագրութեանը մի զբոյս է նուիրել Րաֆֆին Բիբի-Շարաբանի վերնագրով:

Եւուսեան ամրոցը մի բարձր աշտարակի տեսք ունի, որ չորս կողմից շրջապատուած է բաւական հաստ պարիսպով: Աշտարակը միայն մի մուտք ունի, որի մօտ շարունակ հսկում է շուտօրէն ամրոց-ի գեարբ պահապանը:

Երբ մի գեարբ մարդ է մեռնում, նրա մարմինը լուանում են, թեթև կերպով հագնում և տանում են շուտօրէն ամրոց ու դնում բաց երկնքի տակ: Նրան չեն թաղում հողի մէջ, որովհետև զրադաշտական օրէնքը խստիւ արգելում է այդ բանը: Մեռածի մարմինը հողի մէջ փթում և պղծում է երկիրը, որ բազկացած է գեարբերի համար սուրբ 4 զլխաւոր տարրերից՝ հողից, օդից, կրակից և ջրից:

Դիակը դնում են մի պատուանդանի վրայ և գիշակեր թռչունների կերակուր դարձնում: Մի քանի օրից յետոյ մեռածի մերձաւորները դնում են տեսնելու, թէ վերոյիշեալ թռչունները դիակի ձր մասերն են ամենից առաջ գիշատել և զրա համեմատ էլ դանազան գուշակութիւններ անում: Եթէ մեռածի աչքը ամենից առաջ են գիշատել, նշանակում է նրան ապագայում մեծ երջանկութիւն է սպասում:

Երբ մեռեալի դիակը բոլորովին փթում կամ գիշակեր թռչուններից յոշտուում է, շուտօրէն ամրոց ի միակ պահապանը վերցնում է նրա բոլոր ոսկորները և ձգում աշտարակի խոր փոսի մէջ, որտեղ ժողոված են բոլոր մեռած գեարբերի ոսկորները:

Ամենամեծ դժբաղդութիւնն է ամեն մի գեարրի համար, երբ նա օտարութեան մէջ է մեռնում, որտեղ չկայ շէնքի տան ամբողջ: Այդպիսի խռոր գերեզմանատներ ունեն գեարրերը Պարսկաստանի միայն այն քաղաքներում, որտեղ բաւականաչափ գեարրեր են ապրում. օր. Թէհրան, Քերման, Շազդ, Շիրազ և ուրիշ տեղերում: Օտար քաղաքներում մեռնող գեարրերի դիակները սովորաբար դնում են սարերի գաղաթներին և չորս կողմը շարում քարեր: Այդպիսի գեպքերումն էլ դիակները պէտք է դրած լինեն քարէ, փայտէ կամ մետաղէ տախտակների վրայ, որովհետեւ ինչպէս ասացինք, գեարրերի կարծիքով չպէտք է հողը պղծել նեխուող դիակով: Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ գեարրերը պղտոր ջուր չեն թափում գետնի վրայ, այլ միայն այն տեղերում, ուր ծառ կամ խոտ է բուսած, որոնք ընդունակ են թափւած պղտոր ջուրը ծծելու:

Վերոյիշեալ ծէսերն ու սովորութիւններն է թելադրում բոլոր գեարրերին Ջրադաշտի վարդապետութիւնը, որի հիմնական բովանդակութիւնը հետեւեալն է:

Գեարրերը կոչւում են նաև զարդուշտիներ նրա համար, որովհետեւ կրօնական տեսակէտից նրանք պատկանում են մի վարդապետութեան, որի հիմնադիրը համարւում է Ջրադաշտ: Վերջինիս կրօնական ամբողջ սխառեմը ամփոփուած է «Զինդ-Աւեստա» կոչւած գրքում, որը բոլոր գեարրերի ամենասարգան գիրքն է:

Հին պարսկիների կրօնը դուալիստական վարդապետութիւն է դարձել և որոշ սխառեմի է ենթարկուել Ջրադաշտ մեծ իմաստունի շնորհիւ, որ ապրում էր Մովսէս մարգարէից յետոյ: Նրա բուն իրանական անունը Ջարադուշտրա էր, իսկ Ջրադաշտ են կոչում նրան միայն հնադարեան կլասիք գրողները: Մի քանի իրանագէտների կարծիքով Զինդ-Աւեստան սկզբում բաղկացած է եղել 21 մասերից, սակայն դրանցից մեկ հասել են միայն 4 մասերը.—Վնդիդատ (հին իրանական դիցաբանութիւնը), Նաշտ (աղօթքների և աստուածների նուիրումած ներբողների ժողովածուն), Վխոդիդ (ուրիշ աղօթքներ) և Նաշտ (վերջաբան):


Ջրադաշտի վարդապետութիւնը քարոզում է, որ աշխարհն իր ծագմամբ պարտական է երկու սկզբունքների՝ բարւոյ և չարի: Այդ աշխարհը բաժանւած է երկու միմեանցից տարբեր թագաւորութիւնների, որոնցից մէկը բարի, լուսաւոր, լաւ է, իսկ միւսը՝ չար, խաւար և վատ: Առաջին թագաւորութեան ներկայացուցիչն է Անուրամազդան կամ Որմիզդը, իսկ միւսին՝ Անգրօմանիան կամ Ահրիման: Այդ երկու ներկայացուցիչները յարատեւ կուում են միմեանց հետ, իւրաքանչիւրը իր սկզբունքի յաղթանակի հա-

մար և կը զայ ժամանակ, երբ բարւոյ սկզբունքը կատարեալ յազթութիւն կտանի: Արամազդի օգնականները համարուած են բարի հոգիները (հրեշտակներ) կամ ամշասպանդները, իսկ Ահրիմանինը՝ դեհըրը (սատանաները) կամ քաջքերը:

Զրադաշտի վարդապետութեան բոլոր կողմնակիցները մասնակցում են վերոյիշեալ մեծ կռիւն: Նրանցից իւրաքանչիւրը պարտաւոր է օգնել Որմզդին, որպէս զի բարւոյ սկզբունքը կատարեալ յազթանակ տանի: Սեմիտականութեան ազդեցութեան տակ Զրադաշտի վարդապետութեան մէջ ժամանակի ընթացքում զօրացել է մի աստուածութեան տարրը: Հէնց զրա համար այդ վարդապետութիւնը իսկապէս ճանաչում է մի Աստուած, որի ներկայացուցիչը երկնքում արեգակն է (խուրշիդ), իսկ երկրիս վրայ—կրակը (աթէշ): Հէնց զրա համար արեգակը և կրակը կազմում են բոլոր գեաւորների պաշտամունքի ամենաարքայան Նիւթերը: Կրակը-յաւիտենական լոյսի ամենամաքուր էմբլէման է: Կրակին պաշտելու համար գեաւորները կոչւում են նաև կրակապաշտներ (աթէշ փարաստ): Կրակի պաշտամունքը ամենահին ժամանակներում շատ տարածուած էր նաև իրանական մի ուրիշ երկրում՝ Մարաստանում, որ հարուստ էր իր նաւթային անշէջ և անսպառ աղբիւրներով:

Դեաւորները կրակին յարգում և պաշտում են քառակուսի ձևով շինուած աղօթարաններում, որոնք կոչւում են կրակատներ կամ Վթաշնտէ-ներ: Վթաշ նոր պարսկերէն լեզուով նշանակում է «կրակ», որի համար զրադաշտական պարսիկները գործ էին ածում Վթաշ խօսքը: Իսկ «քեռէ» կամ «քէտահ» նշանակում է տուն:

Դեաւորների կրակատունը շրջապատուած է լինում պարսպով, որի ներսը ոչ մի այլադասան իրաւունք չունի մտնելու: Զրադաշտական օրէնքը գեաւորներին խստիւ արգելում է իրանց աղօթարանների ներքին զաղտնիքները օտարադասանութիւններին պատկանող անհատներին յայտնելու: Դա իւրաքանչիւր գեաւորի համար առնուազն սրբապղծութիւն է, որի համար նա կարող է ամենաթանր պատիժների ենթարկուել: Կրակատան մէջ տեղում շինուած է վերևից ծածկուած մի հնոց, որի վրայ նկարուած է արեգակի կերպարանքը: Վերջինիս կարող են տեսնել միայն աղօթարանի հոգևոր պաշտօնեաները: Դրանք են մոզերը կամ քըրմերը, որոնք համարուած են գեաւորների կրօնական իմաստութեան և գիտութիւնների գլխաւոր ներկայացուցիչները: Դրանք են ամենից առաջ աղօթում (վուստա) և զրքեր (քետիֆ) կարգում



Գէորգ (Կրակապաշտ)



ԳԵՐՈՒՆԻ



Պարսունի կամ Գէրջունի




Գէրջունների գերեզմաննոց



Գէորգների կամ պարսիների ընտանիք



Գէորգիանցի տուն



Ատրուշան կամ Կրակատուն

հաւատացեալ գեաւորների համար, որոնք աշխատում են լաւ յարաբերութիւն պահպանել իրանց քրմական դասակարգի հետ:

Հէնց այդ միեւնոյն քրմերի պարտականութիւնն է աղօթարանի կրակը միշտ անշէջ պահել, շարունակ փայտ կամ ածուխ ածելով սրբազան կրակի վրայ, կրակի հնոցը ունի մի մեծ ծրխնելոյդ, որը աղօթարանի կառուրից դուրս է հանուած: Մոգերի պարտականութիւնն է հսկել, որ կրակի մէջ ոչ մի կեղտոտութիւն չընկնի: Դրա համար էլ կրակատան կառուրի վրայ երբեմն նստած է լինում մի պահապան, որ ծխնելոյցը միշտ մաքրում է: Գեաւորները ամեն կերպ պէտք է ցոյց տան իրանց յարգանքը դէպի կրակը: Նրանց կրօնը խստիւ արգելում է այն բոլոր գործողութիւնները, որոնք որեւէ կերպ վիրաւորական են կրակի համար: Օր. գեաւորները երբեք չեն ծխում, կրակը զօռով չեն փչում, կրակի մէջ կեղտոտ բաներ չեն այրում և այլն: Մատներով կարելի է համարել ամբողջ Պարսկաստանի այն գեաւորներին, որոնք ծխում են:

Օրեկան հինգ անգամ աղօթելը բոլոր գեաւորների համար պարտադիր է: Զրադաշտական նշանաւոր հանդէսներին աղօթելը մի քիչ արտակարգ է լինում: Երբ գեաւորները գնում են կրակատուն, նրանք աշխատում են իրանց մոգերի ձեռով աղօթել: Մոգերը կամ քրմերը հագնում են սպիտակ զլխարկ և շապիկ, փակում են իրենց ականջները և բերանները և սկսում են աղօթել, երեսները հաւատացեալների հետ միասին դարձնելով դէպի արեւելք: Ամենքն էլ աղօթում են լուսամբնջալով և հետզհետէ արձակում են իրենց հագուստների կոճակները: Գօտին իւրաքանչիւր գեաւորի համար պարտադիր է: Աղօթելու ժամանակ արձակում են նաև այդ գօտիները և ձգում են իրանց ունի վրայ: Այդ ժամանակ կրակատան մէջ այրում են զանազան տեսակ անուշահոտ խնկեր և կնդրուկներ:

Պարսկաստանի բոլոր քաղաքներումն էլ, որտեղ բաւականաչափ գեաւորներ են բնակում, կան կրակատուններ: Գեաւորական իւրաքանչիւր խոշոր կենդրոնի հետ կապուած են թէ՛ բլրաւթեան ամրոցքը և թէ՛ կրակատունը կամ բաթաշքետէքն:

Մի երբորդ հիմնարկութիւն, որի գոյութեան ջերմեռանդ պաշտպաններն են գեաւորների հոգևորականները, դա դպրոցն է: Մահմեդական պարսիկների հետ համեմատած, զրադաշտական կրակապաշտները բաւական լուսամիտ և առաջադէմ են: Իրանց բոլոր խոշոր կենտրոններում գեաւորները ունեն բաւականաչափ դպրոցներ: Եւ այդ դպրոցները դառնում են ոչ թէ խալիֆայ—

ուսուցիչներին ղեկավարութեան տակ, այլ բաւական բարեկարգ կրթական հիմնարկութիւններ են:

Գեարքերի դպրոցը պարսկական մեզրէսէի կատարեալ հա-
կապատկերն է ներկայացնում: Նա իր կազմակերպութեամբ էա-
կանապէս չի տարբերում Պարսկաստանում գտնուող եւրոպական
և հայկական դպրոցներից: Օրինակի համար կարող ենք մասնա-
ցոյց անել Թէհրանի գեաբբական դպրոցի վրայ: Դա մի երկ-
յարկանի գեղեցիկ շինութիւն է, մայրաքաղաքի Հասանապատ
թաղում, որտեղ մեծ մասամբ ապրում են եւրոպացիները: Դըպ-
րոցը գտնւում է Հասանապատ կոչուած թաղի հայոց երկսեռ
դպրոցի կողքին, որտեղ սովորում են մօտ 80 գեաբբ երկսեռ աշա-
կերտներ: Սրանք տեղաւորուած են առանձին բաժանմունքնե-
րում, որոնց դաստիարակ ուսուցիչները Թէ գեաբբեր և թէ եւ-
րոպացիներ են: Դպրոցում աւանդում են հին և նոր պարսկե-
րէն, զրադաշտական կրօն, թուարանութիւն, պատմութիւն, աշ-
խարհագրութիւն, կար ու ձև, ձեռագործ, իսկ եւրոպական լե-
զուներից միայն անգլիերէն: Անգլիերէն լեզուն գեաբբերի գրեթէ
բոլոր դպրոցներում աւանդում են նրա համար, որովհետև նրանց
կրօնակիցների մեծ մասը ապրում է Հնդկաստանում, որոնց հետ
նրանք կուլտուրական սերտ կապ ունեն: Գեարքերի գրականու-
թեան աչքի ընկնող գրուածները տպագրուած են Հնդկաստա-
նում, որտեղից դրանք պարբերաբար տարածւում են պարսկական
կրակապաշտների մէջ: Նոյնպէս և գեաբբերի դպրոցներում գոր-
ծածուղ դասագրքերը և դասական դանազան պիտոյքները:

Պարսկաստանի գեաբբերի նոր սերունդի մէջ գրագիտու-
թիւնը վերջերս զգալի կերպով տարածուել է, այն ինչ հին սե-
րունդը այդ տեսակէտից բաւական կաղում է: Անգրագէտ են
մեծ մասամբ գիւղացիները, որոնք չգիտեն ոչ միայն իրանց հին
գենդական գրերը, այլ և նոր պարսկերէն գրել և կարդալը: Հա-
սակաւոր կանանց մէջ էլ աւելի քիչ է գրագէտների թիւը:

Այդ տեսակէտից մեծ առաջադիմութիւն են արել գեաբբ
կանայք Հնդկաստանում, որոնք անգլիական կուլտուրական ազ-
դեցութեան տակ գտնուելով, կրթութիւն են ստանում ոչ միայն
Հնդկաստանի միջնակարգ դպրոցներում, այլև ոմանք գնում են
Անգլիա համապատասխան բարձրագոյն կրթութիւն ստանալու:

Գերմանացի նշանաւոր կին-գրող Աննա Պլատովը մեծ գո-
վասանքով է խօսում Անգլիայի համալսարաններում սովորող մի
քանի գեաբբ կանանց մասին, որոնց հետ նա անձամբ ծանօթա-
ցել է: Դրանք իրանց գիտնական մտաւոր պաշարով շատ լաւ
տպաւորութիւն են թողել վերոյիշեալ գրողի վրայ: Դրա համար

էլ նա զովաբանում է գեաբր տղամարդկանց, որոնք իրանց բաւական ազատութիւն են տալիս. մի ազատութիւն, որ մի անգամ ընդ միշտ արգելուած է արեւելքի շատ ազգերի կանանց համար:

Աննա Պլոտովի ասելով լծ տարի է արդէն, որ հնդկական գեաբրուհիները իրաւունք ունեն մանկու անգլիական կողէջները: Դրանցից շատերը ժամանակի ընթացքում ստացել են զօկտօքական տիտղոս: Պլոտովի կարծիքով գեաբրուհիները առանձնապէս աչքի են ընկնում իրանց մաթեմատիքական և գեղարուեստական ընդունակութիւններով: Նրանց մեծ մասը սովորում է բժշկութիւն և վերադառնում է Հնդկաստան: Այդպիսի գովասանքով է խօսում Պլոտովը գեաբր կանանց մասին իր փոքրիկ յօդուածում *):

Գեաբրները բաւականաչափ տարրական դպրոցներ ունեն Պարսկաստանի Թէհրան, Նազդ, Գերման, Շիրազ, Բուշէղ և ուրիշ քաղաքներում, որոնք պահպանւում են թոշակներով և բարեգործ անհատների և գեաբրական ընկերութիւնների տարեկան նպաստներով: Այդ նպաստների մի զգալի մասը Պարսկաստան են ուղարկում Հնդկաստանի հարուստ առևտրական կրակապաշտները, որոնց սրտին շատ մօտ է իրանց հաւատակիցների կըրթութիւնը ժամանակակից պահանջների համեմատ: Գեաբրական դպրոցներին նիւթականապէս նպաստում է նաև Պարսկաստանի ամենահարուստ գեաբր Արբաբ-Ջիմշիդը, որ ապրում է Թէհրանում և մի քանի միլիոնների կարողութիւն ունի: Այդ միլիոնատէրի առևտրական տունը մի քանի նշանաւոր ճիւղեր ունի Պարսկաստանի գլխաւոր քաղաքներում: Թէհրանի գեաբրական դպրոցը ամբողջապէս պահպանւում է վերոյիշեալ հարուստ գեաբրի տարեկան որոշեալ նպաստով:

Ջարմանալին այն հանգամանքն է, որ գեաբր հարուստները ամենաթոււնդ պաշտպաններն են զբաղաշտական կրօնի անադարտ և մաքուր մնալուն: Թէհրանի գեաբրական դպրոցի աւագ-ուսուցիչը մեզ պատմում էր, որ երբ վերոյիշեալ մարդիկ զբաղոցներին փող են նուիրում, նրանք միևնոյն ժամանակ պարտականութիւն են դնում դպրոցական վարչութիւնների վրայ կրօնի դասատուութիւնը իր կոչման բարձրութեան վրայ դնելու: Այդ հանգամանքը թէև զարմանալի, բայց և միևնոյն ժամանակ շատ բընական է: ԶԷ որ կրօնն է նրանց ինքնուրոյնութեան գլխաւոր նեցուկը: Բացի դրանից գեաբրերի կրօնը բարձր բարոյականու-

*) Anna Plotow: Parsi—Frauen. «Berliner Tageblatt». լրատւութիւն (Աննա Պլոտով. Ֆարսի կանայք).

թիւն է բովանդակում իւր մէջ: Կրակը բարութեան և մարդութեան սիմվոլն է: Այդ կրօնի գլխաւոր սկզբունքն է. «Մաքուր մտածել, մաքուր խօսել և մաքուր գործել»:

Գեարքերի գաղտնեւում կրօնից յետոյ երկրորդ գլխաւոր աւարկան համարւում է հին Ֆարսերի պատմութիւնը, որի մանրամասն բովանդակութեան հետ պարտաւոր է ծանօթանալ գեարքերի մատաղ սերունդը: Այդ պատմութիւնը գեարքերին ծանօթացնում է իրանց նշանաւոր նախնիքների փառաւոր և զիւցազնական գործերի հետ: Հերոսներ, որոնց պատմական գործունէութիւնը ոգևորել է պարսիկ նշանաւոր բանաստեղծներից շատերին: Դրանց մէջ ամենապատուաւոր տեղը զբաւում է պարսկական բանաստեղծների թագաւոր Արու-Վասիւմ-Մանուէրը, որ յայտնի է Իրանի բանաստեղծական գրականութեան մէջ Ֆիրդոսիի անունով:

Ֆիրդոսիին, որ համարւում է Հանդեվիդեան հարստութեան պատկանող Մահմուդ սուլթանի ժամանակակից բանաստեղծը, ծնուել է 939 թ. Պարսկաստանի Տարեբան փոքրիկ քաղաքում, որ վտնւում է Խորասան նահանգի Թուս քաղաքի մօտ: Նա գրել է Շահնամէ (Թագաւորների գիրք) վերնագրով աշխատութիւնը և այդ գործով դարձել վերածնունդ գրականութեան ամենափայլուն ներկայացուցիչը:

«Շահ-Նամէ»-ի մէջ Ֆիրդոսիին (դրախտային) երգել է հին Ֆարսերի նշանաւոր զիւցազների փառաւոր գործերը և իր ընթերցողների համար կենդանի կերպով ներկայացրել Պարսկաստանի պատմական հնագոյն անցեալի հետ սերտ կերպով կապուած նշանաւոր ականդութիւնները:

Վերոյիշեալ Մահմուդ սուլթանի հովանաւորութեան շնորհիւ էր, որ Ֆիրդոսիին ձեռնարկեց գրելու բանաստեղծական այդ փառաւոր աշխատութեանը, որով իսկապէս սկսւում է Իրանի մտաւոր կեանքի վերստին բարձրանալը: «Շահ-Նամէ»-ն է, վերջապէս այն աշխատութիւնը, որի բովանդակութեան մեծ մասը համարեա անգիր են սովորում գեարք աշակերտ-աշակերտուհիները և իրանց գիտակցութեան մէջ թաքնւում պահւում իրանց հին հերոսների պատմական յիշատակները:

Պարսկաստանի ժամանակակից գեարքերը քաղաքական և տնտեսական աւելի նախանձելի պայմաններում են ապրում, քան թէ իրանց նախորդները, որոնք արաբական տիրապետութիւնից ի վեր մինչև 19-րդ դարու 60-ական թուականները շարունակ ենթակայ են եղել բազմազան ճնշումների պարսկական մահմեդական քաղաքական իշխանութեան ներկայացուցիչների կողմից:

Գեաղարքի քաղաքական ազատութեան և կրօնական արտօնութիւնների արշալոյսը սկսւում է Նասր-էդ-դին շահի կտաւովաբութեան առաջին տարիներից: Այդ միապետի ժամանակ մի քիչ ազատ շունչ են քաշում ոչ միայն պարսկական կրակապաշտները՝ այլ և պարսկահպատակ հրէաները, բարինները և մասամբ էլ հայերը: Նասր-էդ-դին շահից առաջ գեաղարքը պարտաւոր էին նոյն իսկ հազուադէպ տարբերել տիրապետող մահմեդական պարսիկներից և ըստ կարելւոյն քիչ շփուլն ունենալ նրանց հետ: Գեաղարքին արգելւած էր քաղաքների փողոցներով ձիերի կամ էշերի վրայ նստած անցնելը: Նրանք իրաւունք չունէին պարսիկների ներկայութեամբ կարգաւ մահմեդական կրօնական գրքերը: Ամենածանր պատիժների կենթարկւէր այն գեաղարք, եթէ նա համարձակւէր Ղուրան կամ մի ուրիշ կրօնական գիրք վաճառել մահմեդական պարսիկ:

Իսկ ներկայումս պատկերը գրեթէ բոլորովին փոխւել է: Պարսիկը ազատ յարաբերութիւն ունի կրակապաշտի հետ: Գեաղարքի հետ շատ սերով են վարւում մանաւանդ այն պարսիկները՝ որոնք համարւում են բաբական աղանդի հետեւողներ: Վերջիններս կրօնակա՝ մեծ պրոպագանդ են մղում կրակապաշտների մէջ, ցանկանալով իրանց աղանդի կուսակիցների թիւը ստուարացնել: Սակայն կրօնական տեսակէտից կազմում են Պարսկաստանի ազգաբնակչութեան ամենապահպանողական տարրերից մէկը, որոնց հետացնելը իրանց սրբազան կրակի պաշտամունքից մեծամեծ դժուարութիւնների և ջանքերի հետ է կապուած: Թէէնքանի ազդեցիկ բարիններից մէկը ինձ ուզում էր հաւատացնել, որ իրանց աղանդին աջողուել է շատ գեաղարքի գրաւել իր կողմը. սակայն մեր հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ վերջին 25-ամեակի ընթացքում շատ քիչ գեաղարք են անցել բաբական աղանդի շարքերը:

Ներկայումս Պարսկաստանի գեաղարքը ազատութիւն են վայելում նաև առևտրական տեսակէտից: Այդ ազատութեան շնորհիւ են նրանք կարողացել ձեռք բերել տնտեսական այն համեմատական բարեկեցիկ վիճակը, որի մէջ այժմ գտնւում է գեաղարքի մեծամասնութիւնը Պարսկաստանում:

Գեաղարքը զլիսաւորապէս պարապում են հողագործութեամբ, առևտրով և արհեստագործութեամբ: Գիւղացի գեաղարքը պարապում են զանազան հացահատիկների մշակութեամբ, որոնց մեծ մասը նրանք արտահանում են քաղաքների շուկաներում վաճառելու: Անհամեմատ աւելի վատ է այն գեաղարքի տնտեսական վիճակը, որոնք ապրում են իրանց կալուածատէրերի հո-

դերի վրայ և աննպաստ պայմաններով մշակում են նրանց հողերը։ Քաղաքներում ապրող գեաբրերը մեծ մասամբ պարապում են վաճառականութեամբ։ Նրանց խոշոր վաճառականները առևտրական բաւական սերտ կապեր են պահպանում Հնդկաստանի և Ռուսաստանի հետ։ Հնդկաստանից նրանք ներմուծում են Պարսկաստան անգլիական կոնիակ, Յէյլօնի թէյ, իսկ արտահանում են դէպի Ռուսաստան պարսկական գորգեր, չոր մրգեղէն, բրինձ և այլն։ Խոշոր առևտրականներից շատերը ունեն իրանց առևտրական տների ճիւղերը Պարսկաստանի գլխաւոր քաղաքներում։ Մանր վաճառականները գլխաւորապէս պարապում են դեաբրական գործուածքների առևտրով։ Յայտնի են Նազդի մետաքսից պատրաստած շալերը, աղլուխները, թաշկինակները և դանազան գործուածքները, որոնք թէ արժան և թէ դիմացկուն են։

Գեաբր արհեստաւորների մէջ աչքի են ընկնում հիւանները, դարբինները և այլն։

Վերջին ժամանակներս Պարսկաստանի գեաբրերի մէջ զգալի կերպով նկատոււմ է ձգտում մի որոշ քաղաքում համախմբելու և կրակապաշտների մի մեծ համայնք հիմնելու Իրանի պետութեան մէջ։

Այն օրուանից, երբ Պարսկաստանը ազատարար շարժման շնորհիւ տէր դարձաւ սահմանադրութեան և ընկաւ այսպէս կոչուած պարլամենտական երկրների շարքը, այդ օրուանից էլ գեաբրերի մէջ աւելի ևս զարգացաւ քաղաքական և կրօնական առանց այն էլ զօրեղ գիտակցութիւնը։

Գեաբրերն արդէն վաղուց է, որ զգում են թէ կրօնական ինքնուրոյնութեան տեսակէտից իրանց ինչպիսի մեծ վտանգ է սպառնում տիրապետող իսլամ պարսիկներից։ Նրանք շատ լաւ զգում են, որ իրանք իբրեւ մի սակաւաթիւ կրօնական հատուած ցրւում են Պարսկաստանի դանազան քաղաքներում և վաղ թէ ուշ պէտք է կուլ գնան Իրանի տիրապետող ազգաբնակութեան։ Հէնց դրա համար էլ գեաբրերի կրօնական ինքնուրոյնութեան մոլեռանդ նախանձախնդիրները պրոպագանդ են մղում Պարսկաստանի բոլոր գեաբրերի համախմբման համար։

Մոլեռանդ կրակապաշտները այդ են համարում միակ միջոցը, որի շնորհիւ նրանք կարող են աւելի երկար ժամանակի համար փրկել իրանց կրօնական անկախութիւնը։ Պէտք է նկատել, որ հարուստ առևտրական գեաբրերն էլ միջոցներ չեն խնայում մի որոշ տեղ համախմբելու իրանց կրօնակիցներին, որպէս զի նրանք կուլ չգնան կրօնական ուրիշ դաւանութիւնների։